

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ  
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

Տևողությունը – 2 ժամ 30 րոպե

1. Հաշվել արտահայտության արժեքը.  $(2023: 17 \cdot 7 + 7): (432 - 144: 6: 2)$

- 1) 1                      2) 2                      3) 35                      4) այլ պատասխան

2. Քանի՞ անգամ է 0 թվանշանը գրված հետևյալ թվի թվանշաններով գրառման մեջ. երկու հարյուր յոթ միլիարդ քսանմեկ միլիոն հարյուր չորս հազար իննսունվեց:

- 1) 3                      2) 4                      3) 5                      4) 6

3. Որքա՞ն է երկու թվերի գումարը, եթե այն 9-ով ավելի է առաջին թվից և 3 անգամ մեծ երկրորդ թվից:

- 1) 36                      2) 27                      3) 18                      4) 12

4. Դավիթը 5 րոպեում կատարեց 450 քայլ: Նրա մի քայլի երկարություն 60 սմ է: Նշվածներից ո՞րն է Դավիթի արագությունը:

- 1) 54 մ/ր                      2) 60 մ/ր                      3) 72 մ/ր                      4) 75 մ/ր

5. Ժամը քանի՞ սն է, եթե հայտնի է, որ օրվա անցած մասը 3 ժ 30 րոպեով ավելի է օրվա մնացած մասից:

- 1) 13 անց 45 րոպե      2) 14 անց 15 րոպե      3) 15 անց 30 րոպե      4) այլ պատասխան

6. Ամենաքիչը ո՞ր թվանշանն է հանդիպում 75-ից մեծ և 150-ից փոքր բոլոր բնական թվերի գրառումների մեջ:

- 1) 0                      2) 5                      3) 6                      4) այլ պատասխան

7. Ո՞ր թվանշանով է ավարտվում 100-ից փոքր բոլոր կենտ թվերի արտադրյալը:

- 1) 1                      2) 3                      3) 5                      4) 9

8. Ֆուտբոլի առաջնության 3 խաղում թիմը խփել է 3 գնդակ և բաց թողեց 3 գնդակ: Յուրաքանչյուր հաղթանակի համար թիմը ստանում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1, իսկ պարտության համար՝ 0 միավոր: Նշվածներից ո՞րը չի կարող լինել այդ թիմի հավաքած միավորների քանակը:

- 1) 3                      2) 4                      3) 5                      4) 6

9. 4 ջուլիակը 6 օրում, օրական 10 ժամ աշխատելով, 120 մ կտավ գործեցին: Քանի՞ ջուլիակը 140մ կտավ կգործեն 5 օրում, օրական 8 ժամ աշխատելով:

- 1) 6                      2) 8                      3) 5                      4) 7

10. Մեծ և փոքր 30 տուփերում կա 438 մատիտ: Յուրաքանչյուր մեծ տուփում կա 18 մատիտ, իսկ փոքրում՝ 12: Տուփերից քանի՞սն է մեծ:

- 1) 11                      2) 13                      3) 15                      4) 17

11. Էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամը և րոպեն (օրինակ՝ 02 : 23): Օրվա ընթացքում քանի՞ անգամ է ժամացույցի ցույց տված թվանշանները համընկնում 2023 թվի թվանշանների հետ ( 1 հատ՝ 0, 2 հատ՝ 2, 1 հատ՝ 3 ):

- 1) 7                      2) 8                      3) 9                      4) այլ պատասխան

12. Երբ որդու տարիքը լինի 3 անգամ մեծ, քան հիմա, հոր տարիքը 4 անգամ մեծ կլինի որդու տարիքից: Քանի՞ անգամ է հոր տարիքը մեծ որդու տարիքից:

- 1) 4                      2) 7                      3) 8                      4) 10

13. Չորս տարբեր բնական թվերի արտադրյալը մեծ է 30-ից և փոքր է 40-ից: Գտնել այդ թվերի գումարը:

- 1) 11                      2) 12                      3) 14                      4) այդպիսի թիվ չկա

14. Քանի՞ քառանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրի թվանշանների արտադրյալը հավասար է 4-ի:

- 1) 4                      2) 6                      3) 8                      4) 10

15. A, B, C և D կետերը ուղիղ գծի վրա նշված են ինչ-որ հերթականությամբ: Հայտնի է, որ  $AB=100$ ,  $AC=12$ ,  $BD=35$  և  $DC=123$ : Գտնել BC հատվածի երկարությունը:

- 1) 65                      2) 77                      3) 88                      4) 112

16. Ամսաթիվը երբեմն գրվում է 4 թվանշանով՝ օրը և ամիսը ( օրինակ հունվարի 2 կգրվի այսպես՝ 02.01): Տարին քանի՞ ամսաթիվ ունի, որոնք գրվում է միայն 0, 1, 2 թվանշաններով:

17. Միքայելն ընտրեց մի թիվ, այն բազմապատկեց իրենով, ստացվածին գումարեց 11, արդյունքը բազմապատկեց 4-ով և ստացավ 300: Ի՞նչ թիվ էր ընտրել Միքայելը:

18. Եթե եռանիշ թվին ձախից կցագրենք 3 թվանշանը, ապա կստանանք սկզբնական եռանիշ թվից 9 անգամ մեծ թիվ: Գտեք սկզբնական եռանիշ թիվը:

19. Բազմահարկ շենքի ամբողջ առաջին հարկը խանութ է: Շենքի զույգ համարով յուրաքանչյուր հարկում կա 3, իսկ կենտ համարով յուրաքանչյուր հարկում՝ 4 բնակարան: Ո՞ր համարի հարկում է գտնվում 60-րդ բնակարանը:

20. Դասարանը զարդարված է կարմիր, կապույտ և սպիտակ փուչիկներով: Բոլոր փուչիկների քանակը 27 հատով շատ են քան սպիտակները, 20-ով շատ՝ քան կապույտները և 23-ով շատ՝ քան կարմիրները: Քանի՞ փուչիկով է զարդարված դասարանը: